ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ Կ-939-16.04.2021-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի տեքստում	**1.** Նախագիծը կազմված է մեկ չհամարակալված պարբերությունից, ինչպես նաեւ կցված՝ Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2020 թվականի տարեկան հաշվետվությունից (այսուհետ՝ Հաշվետվություն): Հաշվետվությունը, միաժամանակ, պարունակում է ընդհանուր դրույթներ եւ ծրագրի իրագործմանը վերաբերող դորույթներ, դրանց կցված հավելվածներ, որոնց հղում է կատարվում Հաշվետվության՝ ծրագրի իրագործմանը վերաբերող դրույթներում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին վերաբերող 13-րդ հոդվածի համաձայն. *«(…) 2. Նորմատիվ իրավական ակտը ունենում է հիմնական մաս, որում շարադրվում են իրավական նորմերը:* *3. Նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝* *1) նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները.* *(…)* *9. Նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները,*	Չի ընդունվել : Նախագիծը նորմատիվային բնույթ չի կրում, հետևաբար «Հոդվածներ» չեն նախատեսվել: Նախագծով ներկայացվում է մասնավորեցման ծրագրի իրագործմանը վերաբերող տեղեկատվություն:	Չի ընդունվել

			կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները եւ այլն ամրագրվում են (կամ ձեւակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձեւով: Հավելվածներն առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղում են պարունակում այդ հավելվածներին:»: *«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝* *«(…) 2. Օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով: Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը:* *(…)* *4. Օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում: Գլուխները կարող են միավորվել բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Անհրաժեշտության դեպքում բաժինները կարող են բաժանվել ենթաբաժինների՝ միավորելով առանձին գլուխներ: (…)»:* Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի կառուցվածքը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:		
			2. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետի համաձայն. *«Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝* *(…)* *բ) պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:* *Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը պետք է*	Չի ընդունվել: Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրում նշված նպատակների իրագործման աստիճանի վերաբերյալ տեղեկատվությունը ամրագրված է Նախագծի 4-րդ,5-րդ և 6-րդ կետերում:	Չի ընդունվել

			բովանդակի՝ *- հաշվետու ժամանակաշրջանում ծրագրում նշված նպատակների իրագործման աստիճանը.* *- Հայաստանի Հանրապետության կառավարության իրականացրած միջոցառումների նկարագրությունը, հաշվետու տարում պետական գույքի մասնավորեցման վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ մասնավորեցման գործարքների վերաբերյալ քանակային ցուցանիշները՝ ըստ մասնավորեցման ձեւերի եւ ձեռնարկությունների, մասնավորեցման հետեւանքով պետական բյուջե մուտք եղած միջոցների, ինչպես նաեւ մասնավորեցման հետեւանքով փաստացի կատարված ներդրումների եւ ներդրումային պարտավորությունների մասին:* *Ծրագրի հաշվետվության ժամանակահատվածն ընդգրկում է օրացուցային տարին: Ընթացիկ տարվա ծրագրի կատարման մասին հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ մինչեւ հաջորդ տարվա մայիսի 1-ը.»:* Հարկ է նկատել, որ Նախագծով ներկայացված Հաշվետվությունը չի պարունակում հաշվետու ժամանակաշրջանում ծրագրում նշված նպատակների իրագործման աստիճանի վերաբերյալ տեղեկատվություն:		
			3. Նախագծով ներկայացված Հաշվետվության ընդհանուր դրույթների 1-ին կետում «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետին հղում կատարելիս առաջարկում ենք հաշվի առնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել	Չի ընդունվել: «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի (31.05.2006թ., ՀՕ-124-Ն) կառուցվածքը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:	Չի ընդունվել

			միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:	«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածում համարակալված են միայն ենթակետերը:	
			4. Նախագծով ներկայացված Հաշվետվության ընդհանուր դրույթների 9-րդ կետի 1-ին ենթակետում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի լրիվ անվանման հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը՝ հանելով «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի վերանգրից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
			5. Նախագծով ներկայացված ա) Հաշվետվության մի շարք կետեր կազմված են միայն մեկ համարակալված ենթակետից, ուստի առաջարկում ենք հանել համարակալված պարբերությունների համարները: բ) Հաշվետվության՝ ծրագրի իրագործման դրույթների 16-րդ կետի 1-ին ենթակետում նախատեսված է հետեւյալը. «Պետական գույքի մասնավորեցման պայմանագրով 2020 թվականի ընթացքում պրոֆիլի պահպանման եւ սոցիալական երաշխիքների ապահովման պարտավորություններ ստանձնել են 6 գնորդ, այդ թվում՝ 1 գնորդ պայմանագրով ստանձնել է	Ընդունվել է: Ընդունվել է: Հաշվետվության 16-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է

			սոցիալական երաշխիքների ապահովման եւ 5 գնորդ՝ պրոֆիլի պահպանման պարտավորություններ:» Առաջարկում ենք Նախագծով ներկայացված Հաշվետվության՝ ծրագրի իրագործման դրույթների 16-րդ կետում պրոֆիլի պահպանման եւ սոցիալական երաշխիքների ապահովման պարտավորություններ ստանձնած գնորդների թվի մասին նշում կատարել առանձին ենթակետերով՝ հիմք ընդունելով իրավական տեքստի հստակության ապահովման անհրաժեշտությունը:		
			6. Նախագծով ներկայացված Հաշվետվության՝ ծրագրի իրագործման դրույթների 17-րդ կետի 1-ին ենթակետում «կետի» բառն առաջարկում ենք փոխարինել «մասի» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի, 7-րդ մասը՝ օրենսդրական ակտի հոդվածները, մասերը եւ կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով, ինչպես նաեւ 17-րդ հոդվածի 4-րդ մասը՝ հղումները կատարվում են հստակ եւ ուղղակի: Միաժամանակ՝ առաջարկում ենք Նախագծով ներկայացված Հաշվետվության՝ ծրագրի իրագործման դրույթների 17-րդ կետի ենթակետերը համարակալելիս պահպանել համարների հաջորդականությունը:	Ընդունվել է: Ընդունվել է:	Ընդունվել է Ընդունվել է

			7. Նախագծով ներկայացված ա) Հաշվետվության 1-ին հավելվածի աղյուսակում առաջարկում ենք համարակալել նաեւ 2-րդ տողը: բ) Նախագծով ներկայացված Հաշվետվության 2-րդ հավելվածում «Ներդրումային պարտավորությունների եւ սոցիալական երաշխիքների մասին՝ ըստ մասնավորեցման պայմանագրի» վերտառությամբ սյունակի վերնագիրը առաջարկում ենք համապատասխանեցնել դրա բովանդակությանը՝ հաշվի առնելով այն հագամանքը, որ դրանում նշում է կատարվում պրոֆիլի պահպանման վերաբերյալ:	ա) Ընդունվել է: բ) Չի ընդունվել: Հաշվետվության 2-րդ հավելվածում «Նախատեսված պայմանագրային պարտավորությունները» վերնագրով սյունակում ներառված է նաև 2-րդ տողում նշված գնորդի կողմից մասնավորեցման պայմանագրով ստանձնված սոցիալական երաշխիքների ապահովման պարտավորության վերաբերյալ տեղեկատվությունը:	Ընդունվել է Չի ընդունվել
			8. Նախագծով ներկայացված Հաշվետվության 3-րդ հավելվածի աղյուսակի 2-րդ տողի 2-րդ սյունակում առաջարկում ենք չկիրառել «ՀՀ» հապավումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ:	Ընդունվել է:	Ընդունվել է
			9. Նախագծով ներկայացված Հաշվետվության «Հաշվետու ժամանակահատվածում լուծարման գործընթացի մասին» տեղեկություններին վերաբերող աղյուսակի վերեւի աջ անկյունում առաջարկում ենք նշել «Հավելված 4 «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2020 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի» ձեւակերպումը՝ հաշվի առնելով այն	Ընդունվել է:	Ընդունվել է

			հանգամանքը, որ Նախագծով ներկայացված Հաշվետվության՝ ծրագրի իրագործման դրույթների 17-րդ կետի ըստ հաջորդականության 7-րդ ենթակետում հղում է կատարվում 4-րդ հավելվածին եւ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը՝ հղումները կատարվում են հստակ եւ ուղղակի:		